Ահաբեկիչը այն է, որ վախ պատճառող քայլերու կը դիմէ իր նպատակին հասնելու համար: Ահաբեկիչը կրնայ անհատ մը, կազմակերպութիւն մը եւ կամ նոյնիսկ պետութիւն մը ըլլալ: Ահաբեկիչը կրնայ մեծ արարքներու դիմել, որովհետեւ իր նպատակներուն հասնելու այլ միջոցներ չունի, սակայն հոգօր պետութիւններ եւս ահաբեկութեան կը դիմեն, պարզապէս որովհետեւ կը կարծեն, թէ մեծ արարքներ նուազ ժամանակ եւ ջանք կը խլեն, մինչ իրականութիւնը միշտ այդպէս չէ:

Միւս կողմէ, ազատամարտիկը այն է, որ զէնքի ուժով կը պայքարի իր իրաւունքները կամ իր երկրին ազատութիւնը ապահովելու համար:

Իսրայէլի մեկնաբանութեամբ ահաբեկիչներ են բոլոր անոնք, որոնք կը յարձակին իսրայէլացիներուն վրայ, հակառակ այն իրողութեան, որ անոնք փաստօրէն ազգային ազատագրական պայքար կը մղեն: Ուշիցկիները, որ յաճախ Իսրայէլի կեցուածքին, սակայն արբեներու դէմ Իսրայէլեան քայլերուն նոյն որակումը չի տար:

Իսրայէլի տրամաբանութեամբ, Ուշիցկիները արդեօ՞ք համաձայն պիտի ըլլայ, եթէ ահաբեկիչներ կոչենք 18րդ դարուն բրիտանացիներուն դէմ պայքար մղած ամերիկացիները, կամ այն իսրայէլացիները, որոնք ահաբեկչական արարքներու դիմեցին Իսրայէլի հիմնադրութեան նախօրեակին:

Նոյն տրամաբանութեամբ, կարելի է ահաբեկիչներ համարել Արցախի ազատամարտիկները, կամ Հարաւային Ափրիկայի մէջ սպիտակամորթներուն հաստատած մեհապիտութիւնը տապալած սեւաուորները:

Վերոյիշեալ բացատրութիւնները պատասխանները վստահաբար բացասական պիտի ըլլան, բացառաբար այն իրողութիւնը, որ պաղեստինցիները կամ «Հըզպալլա» անդամները պարզապէս «ահաբեկիչ» որակելու Իսրայէլի դիրքը խախտու հիմնու վրայ հաստատուած է:

ԳԵՐՈՐԳ ՄԱՆՈՅԵԱՆ

ՆԱՍԱՐ

ՏՐԳ ԲԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Հ. Յ. Դ. Բիւրոյի երիտասարդական Գրասենեակի աշխատանքային ուղեգիծ ծրագիրը կը նախատեսէ համահայկական բանակութիւնները կազմակերպել երկու տարին անգամ մը: Համահայկական առաջին բանակումը տեղի ունեցած էր 1997ին Սեւանի մէջ, 1999ին Արցախի, 2001ին Բիւրականի, իսկ իր շարքի Տրդը՝ 6-15 Օգոստոսին: Պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ այսօր, իսկ աշխատանքային ընթացքը կը սկսի վաղուցէն:

Յատկանշական է, որ այս բանակումը նուիրած է Արցախեան ազատամարտի 15ամեակին: Նորերը չեն մոռնար, կը յիշեն:

Բանակումը առաջին օրը օրերուն տեղի պիտի ունենայ Ղափանի շրջանի կարմրաքարի գօրանոցին մէջ, որմէ յետոյ պիտի շարունակուի Արցախի Ասկերանի գօրանոցին մէջ:

Բանակումի ծրագիրը կը նախատեսէ աշխատանքային յայտագիր մը, բաժնետեւծ տարիքային յարմարութեամբ՝ 16-26 տարեկան: Ընդհանուր ծրագիրին մէջ ներառուած են դասախօսութիւններ, մտքերու փոխանակում, միութիւններու ծանօթացում, մարզանք, մրցոյթներ, տեսաբերիզի դիտում, հանդիպում պատասխանատու ընկերներու հետ, յանձնարարական աշխատանքներ, ազատ բեմի վրայ վերջին տարիքային օրուայ նշում, արշաւներ, այցելութիւններ Արցախ, Սեւան, Ծիծեռնակաբերդ, մէկ խօսքով Հ. Յ. Դ. երիտասարդական-ուսանողական գործունեութիւնը ընդգրկող հայեցակարգ, որ առաւելագոյն թիւով դաշնակցական երիտասարդներ կենդանի շփման պիտի թերեւ, դաշնակցական մթնոլորտի, նպատակի, ծրագրի եւ դասախօսարկութեան շուրջ:

Երիտասարդները կազմ ու պատրաստ են: Բանակավայրը կը սպասէ գոհացում տալ երիտասարդներու ակնկալութիւններուն:

«ԱՉԱՏ ՕՐ»



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ՄԻՆՉ ԱՄՈՒՐԻՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՕՐԷ ՕՐ Կ'ԱճԻ, ԸՆՏԱՆԻՔ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՐԵՒՈՅԹԸ ԱՒԵԼԻ ԵՒՍ ԿԸ ԴԺՈՒԱՐԱՆԱՅ

Տարիներու թաւալու- մին հետ, հետզհետէ կը չքանայ այն մտածելակերպը, թէ աղջիկ կամ տղայ պէտք է ամուսնութեան ձեռնարկեն եւ պատկուծի երբ անոնց տարիքը որոշ սահման մը թեւակոխէ: Նախապէս, մարդիկ ամբողջովին կը հաւատային, որ եթէ տուեալ տարիքին կամ անկէ քանի մը տարի ետք աղջիկ մը չպատկուծի, ուրեմն ան պիտի մնայ իր ծնողքին տունը եւ «բախտը պիտի չփայտի անոր»: Այդ համոզումով ապրող եւ իրենց գաւակները դաստիարակող ծնողները ամէն ճիգ ի գործ կը դնէին, որ պէսգի իրենց գաւակները իրենց «երկրորդ կէտ»ը գտնեն ու միանան անոր, թէ եւ անոնք շատ երկար չէին մտածեր այդ «երկրորդ կէտ»ին յարմար ըլլալուն եւ կամ իսկապէս «երկրորդ կէտ»ը ըլլալուն մասին: Այն ստեղծ հիմնական տուեալը փետային կամ հարսին գոյութիւնն էր, իսկ մնացեալ տուեալները երկրորդական եւ նոյնիսկ երրորդական կը նկատուէին: Ներկայանալի, լաւ եկամուտ ունեցող տղայ մը արդէն բաւական մեծ գանձ կը նկատուէր, իսկ երանջովի էր այն տղան, որ քայքայուի տան աշխատանք կատարող եւ ճաշ եփող աղջիկ մը կը գտնէր: Անոնք չէին մտա-

Այս մտածողութիւնն ու ըմբռնումները թէ եւ տակաւին գոյութիւն ունին կարգ մը մարդոց մօտ, սակայն անոնք տիրական չեն այնքան, որ քան աւելի հին ժամանակներուն: Այսօր չափանիշներն ու ըմբռնումները ամբողջովին փոխուած են, սէրն ու փոխտղարմը հասկացողութիւնը կը հանդիսանան ապագայի ծրագրիներուն մշակման հիմքը, բայց այսօր անոնք շատ յաճախ միայն հիմք կը մնան ու իրականութեան չեն վերածուիր: Զոյգերը այսօր շատ աւելի իրապաշտ կը մօտենան հարցերուն, կը վերլուծեն զանոնք եւ կը փորձեն կամ յարմար լուծում ու ելք գտնել գոյութիւն ունեցող հարցերուն կամ ալ ետ դարձ կատարել, հրաժարիլ այս քայլը առնելէ եւ տառապանքով ու երբեմն դժբախտութեամբ լքուելու ընտրելէ: Ամուսնութեան որոշ տարիք գոյութիւն չունի այսօր, աղջիկ կամ տղայ կ'ամուսնանան, երբ կը գտնեն յարմար անձը եւ անոնք միասնաբար կը կառուցեն իրենց ապագան: «Երկրորդ կէտ» եզրը այսօր աւելի իրաւացի մկասծ է դառնալ, որովհետեւ անհատը կը փորձէ գտնել իր ուսման մակար-



կերային, քաղաքական եւ կրթական օգակներու ամբողջութեան վրայ՝ եւ նկատի ունենալով, որ ընտանիքը կը կազմէ ընկերութեան ամէնէն փոքր ու կենսական ընթացքը վրայ կ'ընդունի ազդել այս տուեալներէն որեւէ մէկուն մէջ պատահած նահանջը կամ դժուարութիւնը: Փաստօրէն, այսօր Լիբանանի մէջ ընտանիքը կազմելու միջին չափանիշը զգալի նահանջ արձանագրած է, որովհետեւ նկատի առնելով առկայ դժուարութիւնները, այսօր շատ մեծ չէ թիւը այն երիտաւար զինուորացիներուն, որոնք կը ձեռնարկեն ամուսնութեան: Ընտանիք կազմելու պարագային նոյնպէս ընտանիքի անդամներուն թիւը, որ նախապէս 7էն 10 անդամ կը հաշուէր, այսօր միջին հաշուով 3էն 5ի միջեւ կը տարբերուի:

Գոյութիւն ունեցող անտեսական ու ընկերային վատ պայմաններուն պատճառով, Լիբանանի մէջ զգալի է բնակչութեան պատկերի մեծ փոփոխութիւն: Այսօր բնակիչներուն մէջ աւելցած է ծերերուն եւ կիներուն թիւը, միւս կողմէ նուազած է երիտասարդներունը, որովհետեւ վերջիններս իրենց ուսման աւարտէն ետք կը հեռանան Լիբանանէն՝ իրենց ապագան այլ տեղ փնտռելու համար: Լիբանան ապրող եւ հոս մնացող երիտասարդութեան մեծամասնութիւնը միջինը որոշ տարիք մը, որ անպայման 28էն 30ի միջեւ կը տարբերուի տղոց պարագային, ամուրի կը մնայ: Այս իմաստով անշուշտ նոյնը չէ պարագան հարուստներուն, որոնք իրենց ծնողներուն օժանդակութեամբ դիւրութեամբ կրնան ընտանիք կազմել, բնակարան ու ապրուստ ապահովել իրենց սիրած անձերուն: Սակայն, նկատելի է, որ այս վերջինները այնքան ամուսնութեամբ, որովհետեւ իրենց ունեցած կարելիութիւններով անոնք կը նախընտրեն իրենց կենսաքրքրեալ ապրիլի եւ վայելելի առանց ռեւէ անձի կապուած ըլլալուն:

Մարդիկ կը ծննդաբերէին առանց հաշիւ ընելու եւ մտածելու իրենց գաւակներուն լաւ ապագայ մը ապահովելու կարելիութիւններուն մասին: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ միջնակարգ ուսում ստացող աղջիկները շատ ուսանած կամ անուս աղջիկներէն աւելի կ'ամուսնանան: Ըստ տուեալներուն, անոնք մեծ պահանջներ չունին, ինչպէս շատ ուսած անձերը եւ այդ պատճառով ալ, անոնք աւելի դիւրին կը գտնեն իրենց յարմար անձը, զիջում կը կատարեն եւ կ'ընտելանան իրենց տրուած պայմաններուն:

Տղոց պարագային, բնականաբար համալսարանական ուսում ստացած տղաքը աւելի հաւանականութիւն ունին պատկուծելու, որովհետեւ իրենց վկայականը իրենց առիթ կու տայ աւելի պատկառելի ամասկան ստանալու եւ ընտանիք կազմելու աւելի լայն առիթներ ունենալու:

Տուեալները ցոյց տուած են, թէ արհեստաւոր տղաքը կամ համալսարան յաճախած, սակայն իրենց մասնագիտութեան համաձայն գործ չգտած տղաքը կը կազմեն ամուսնութեան մեծամասնութիւնը, որովհետեւ վերջիններս առանց մտածելու քայլեր չեն առնել եւ չեն ձեռնարկել բանի մը, որուն յաջողութիւնը հեռու կը թուի ըլլալ:

Լիբանանեան կեանքի տնտեսական եւ ընկերային դժուարութիւնները այսօր մեծ խոչընդոտներ կը դնեն երիտասարդներուն դիմաց եւ անոնք դժուար թէ կարենան այս բոլորէն դուրս ելլել եւ դիւրութեամբ ընտանիքներ կազմել: Նախապէս, իրենց ծնողքին տունը մնացած եւ չամուսնացած աղջիկներուն թիւը շատ աւելի մեծ էր, քան՝ տղո-



Լիբանանի մէջ կատարուած վիճակագրութիւն մը ցոյց տուած է, թէ բնակչութեան աճը հասած է 19,5 առ հարիւրի, իսկ 65 տարիքը բոլորած անհատները կը հանդիսանան ընդհանուր բնակչութեան 6,6 առ հարիւրը: Ըստ այդ տուեալներուն, ծննդաբերութեանց թիւը վերջին 15 տարիներուն նուազած է, իսկ ընտանիքներուն մեծամասնութիւնը յիշուած կը մտածէ իր գաւակներուն ապագան ապահովելու եւ անոնց ուսում ղամբելու մասին: Նախապէս պարագան նոյնը չէր, որովհետեւ բազմաթիւ գաւակներ ունենալը սովորական երեւոյթ էր

ցը, սակայն այսօր անոնք որոշ տոկոսով շատ կը մօտենան իրարու, որովհետեւ տղաքը եւս մեծ արգելքներ ունին ամուսնութիւններ կնքելու եւ ընտանիք մը բեր ստանձնելու, մասնաւոր թէ իրենց անոնք արդէն իրենց ծնողներուն ապրուստը ապահովելու պարտադրանքին տակ կը գտնուին: Ամուսնութիւնն ու ընտանիք կազմելը քաղցր ու հաճելի երեւոյթներ են, սակայն դէպի այդ հաճոյքը առաջնորդող ուղիին բաւական անանցանելի եւ քարքարոտ է...

ՍՆՆՊԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ԽԱՂՈՂՆ ՈՒ ԱՆՈՐ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Դէպի բնութիւն վերադարձը ներկայիս մեծ քաջալերանք կը ստանայ ժողովուրդներու կողմէ, մասնաւորաբար փաստուելէն ետք, թէ քիմիական նիւթերու և դեղերու վնասները շատ աւելի են, քան օգուտները: Խաղողը մարդկութեան յոյսերէն մէկը կը ներկայացնէ՝ ձերբազատելու համար քիմիական նիւթերէն: Խաղողը թուրքի կողքին պտուղներուն թագաւորը կը նկատուի: Ան սնունդ կու տայ մարմնին եւ կարելի է գայն գործածել նաեւ իրբեւ բուժիչ դեղ:



Խաղողը կը պարունակէ 15 առ հարիւր շաքար, որուն 7 առ հարիւրը կը պատկանի կլուքոզ տեսակին, որ մարտոկութիւնը դիւրացնող շաքար է եւ որուն վրայ կը վստահ լեարդը եւ իր մէջ ամփոփելով կ'օգտագործէ գայն: Կլուքոզը մարմնին ուժականութիւն կու տայ: Ամէն հարիւր կրամ խաղողը կը պարունակէ վաթսուս ու թէ քիլո քայտը: Խաղողը կը բաղկանայ նաեւ 1,5 առ հարիւր փրոթէինէ եւ 1,5 առ հարիւր ճարպէ եւ թթուային նիւթերէ, ինչպէս նաեւ փոթասիտ, բալսիտ եւ ֆոսֆոր աղբէ, «էյ» կենսանիւթէ, որ դէմքին փայլը կու տայ եւ կ'օգնէ տեսողութեան, «Սի» կենսանիւթէ, որ մարմնին դիւրացողականութիւնը կ'աւելցնէ: Խաղողին կեղեւը հարուստ է «Պի» կենսանիւթով, որ շատ մեծ օգուտներ ունի մարմնին մասնաւորաբար՝ ջղախիճ գրութեան:

ԽԱՂՈՂԸ ԻՐԵՒԵՒ ԴԵՂ

Խաղողը մարմնին զանազան պաշտօններուն միջոցով անկէ դուրս կը հանէ թունաւոր տարրերը: Խաղողին մէջ գտնուող նիւթերուն բաղադրութիւնն ու անոնց կազմուածքը կ'օգնեն, որ անիկ մեծ օգուտներ բերէ մարմնին: Խաղողը մարմնին մէջ գտնուող վնասակար տարրերը հալեցնելու պաշտօնը ունի: Ան կը հալեցնէ այս թունաւոր տարրերը՝ առանց վնաս պատճառելու առողջ ընթացքով: Բայց ան ոչ միայն կը հալեցնէ մարմնին վնասակար տարրերը, այլ զանոնք դուրս կը հանէ մարմնէն: Ցաւոյն շաղկապական է, որ բուժման ընթացքին անհատը երբեք պնտութիւն չ'ունենայ: Խաղողը կը բուժէ եւ կը հակառակէ նաեւ այն վէրքերը, որոնք հետեւանքն են գեղձերու մէջ գտնուող թոյներու վերացման: Այս բոլորին հետ միասին, խաղողին մէջ գտնուող նիւթերը մարմնին ընթացքին կազմութեան մէջ դերակատար կը դարձնեն գայն:

Գրագէտ Պասիլ Եֆրէյմը կը պատմէ իր փորձառութիւնը խաղողին հետ եւ բուժումը անոր միջոցով: Գրագէտը ենթադրուած էր պահարսիս հիւանդութեան որուն պատճառով ալ երկկամուսնուր վնասուած էր եւ հիւանդութիւնը սկսած էր տարածուիլ միւս երկկամուսնուր մէջ: Ցաւերէն եւ բորբոքումներէն յուսահատ որոնց դիմել խաղողի բուժումին: Եօթը շաքար խաղողէն զատ ուրիշ ոչ մէկ բան կերաւ: Երբ 27րդ օրը վերջ գտաւ, անոր երկկամուսնուր իր բնական ընթացքը ստացաւ: Եֆրէյմը կ'ըսէ, թէ խաղողի բուժման ընթացքին ուրիշ ուտելիքներ պէտք չէ ունենալ, մասնաւոր հեռու պէտք է մնալ ծխախոտէն եւ ոգելից ըմպելիէն: Կարելի է գաղջ ջուր խմել՝ ծարաւ զգալու պարագային: Իսկ բնական բուժումի հետեւող բժշկուհի Ժոհաննա Պրանդ կ'ըսէ, թէ խաղողը ինքնին բուժիչ դեղ մըն է, պէտք չկայ անոր հետ գործածելու այլ տարրեր, որովհետեւ ան կը պարունակէ բոլոր անհրաժեշտ բուժարարները: Ան կը բուժէ աղիքները, ստամոքսը եւ լեւոյցը: Հակառակից մը ըլլալով՝ խաղողին ազդեցութիւնը լինտերուն վրայ շատ աւելի է, քան՝ քիմիական դեղերը: Բժշկուհի Ժոհաննա կ'ըսէ, թէ մասնակները շատ աւելի դիւրաւ եւ կարճ ժամանակի մը մէջ կը բուժուին իրենց անհոգիները: Ան կը շարունակէ ըսելով, թէ քիմիական նշագեղձերու բորբոքումներուն համար լաւագոյն դեղ խաղողն է: Խաղողը մեծ ազդեցութիւն ունի նաեւ աղիքներու վրայ եւ այդ պատճառով կ'օգտագործուի պնտութեան պարագային: Ան արեան մէջ կը նուազեցնէ սպիտ իւրիքի քանակը եւ կ'աշխուժացնէ լեւոյցը ու անոր կատարած պաշտօնները: Խաղողին հիւթը բուժէ նաեւ հազը: Փաստուած է նաեւ, թէ ան մեծ դեր կը խաղայ ջղային համակարգին վրայ եւ բուժիչ դեղ նաեւ սեռային կարգ մը հարցերու համար: Խաղողի բուժիչ կարողութիւնը անսահման է: Ան միջոցով բուժումը բարդ գործողութիւն չ'ենթադրուի Բուժման ընթացքին, օրուան բնական աշխատանքը պարտականութիւնները կարելի է կատարել առանց ապգելի, եւ պէտք չկայ անկողինի մէջ հանգչելու՝ բացառուի պարագաներէ:



ծեր, կամ աւելի ճիշդ՝ անոնց առիթ չէր տրուել մտածելու անկախ տուն ունենալու, աւելի մօտէն իրարու ծանօթանալու, զիրար ճանչնալու եւ միասին ապագայի ծրագրիներ մշակելու մասին: Տղուն ծնողներուն տան մէջ ապրիլը ոչ մէկ պարագայի հարց կը նկատուէր եւ նոր հարսը մեծ հաճոյքով կը ստանձնէր իր կեանքին ու կեանքային, ինչպէս նաեւ տան այլ անդամներուն խնամքն ու հոգատարութիւնը: «Յարմար» գոյգին միացումէն ետք, այս բոլորը պարզ կը թուէին, թէ եւ անոնք խորքին մէջ շատ բարդ ու թաքուն հարցեր կը յառաջանէին, սակայն ամուրի շատ մեծ ազատութեամբ չէր արտայայտուէր եւ հաշտուելով կեանքի պայմաններուն հետ, այս կամ այն ձեւով կը շարունակէր իր կեանքը՝ ընտանիքի պահպանման ի ինչպիսի: Պատկուծելու եւ ընտանիք կազմելու տուեալներին ու պայմանները շատ տարբեր էին, քան՝ հիմա:

Դակին ու մտածելակերպին մօտ անձ մը, որ կրնայ բաժնել իր մտածումները, աւելի մօտէն իրարու ծանօթանալու, զիրար ճանչնալու եւ միասին ապագայի ծրագրիներ մշակելու մասին: Տղուն ծնողներուն տան մէջ ապրիլը ոչ մէկ պարագայի հարց կը նկատուէր եւ նոր հարսը մեծ հաճոյքով կը ստանձնէր իր կեանքին ու կեանքային, ինչպէս նաեւ տան այլ անդամներուն խնամքն ու հոգատարութիւնը: «Յարմար» գոյգին միացումէն ետք, այս բոլորը պարզ կը թուէին, թէ եւ անոնք խորքին մէջ շատ բարդ ու թաքուն հարցեր կը յառաջանէին, սակայն ամուրի շատ մեծ ազատութեամբ չէր արտայայտուէր եւ հաշտուելով կեանքի պայմաններուն հետ, այս կամ այն ձեւով կը շարունակէր իր կեանքը՝ ընտանիքի պահպանման ի ինչպիսի: Պատկուծելու եւ ընտանիք կազմելու տուեալներին ու պայմանները շատ տարբեր էին, քան՝ հիմա:

Ընտանիքները հիմնուած է սնտեսական, ըն-



Կանոցական

ՇՊԵՐԱՆԻ ԿԱՐԾԻՈՎ

8 ԺԽՏԱԿԱՆ ԿԵՏԵՐ, ՉՈՐՄ ԱՄՈՒՍԻՆ ՄԸ Չ՝ՈՒՉԵՐ ՏԵՄՆԵԼ ԻՐ ԿՆՈՋ ՄԷՉ

Ամերիկեան վիճակագրության մր համաձայն, ձախող ամուսնությունները թիվը օրե-օր կ'աւելնայ եւ անոնց կարեւոր մէկ տոկոսը ամուսնալուծումով կ'աւարտի: Հոգեբանները եւ ընկերաբանները կը փորձեն այս տխուր երեւոյթին պատճառները գտնել եւ զանազան վիճակագրություններու ճամբով որոշ ճշմարտություններ ի յայտ բերել:

Վերոյիշեալ վիճակագրություններէն մէկը կը վերաբերի 8 բացասական կէտերու, զորս ամուսին մը չի հանդուրժեր տեսնել իր կնոջ մէջ: Վիճակագրությունը կատարուած է 500 այրերու կարծիքներուն հիման վրայ եւ հետեւեալ պատկերը կը պարզէ.

1.- Այրերը չեն սիրեր բռնակալ կիները, որոնք նկատի չեն առնել իրենց ամուսիններուն կարծիքը, ինքնավար կ'որոշեն ու կը գործեն՝ առանց անոնց հաւանութեան:

2.- Այրերը չեն սիրեր ստախոս կիները, իսկ յաջող ամուսնություն մը հիմնուած է փոխադարձ անկեղծութեան վրայ:

3.- Այրերը չեն սիրեր ռիսկալ եւ վրէժխնդիր

կիները, որոնք անզիջող են իրենց ամուսինին գործած նուազագոյն սխալին նկատմամբ եւ թշնամական կեցուածք կ'որդեգրեն:

4.- Այրերը չեն սիրեր տեւաբար զանգատող եւ իրենց վիճակէն դժգոհ կիները, որոնք ինքնաբերաբար կը ստիպեն իրենց ամուսիններուն վայրկեան առաջ տունէն փախչիլ եւ ապաստանիլ ուրիշին մօտ:

5.- Այրերը կ'ատեն եսասէր կիները, որոնք կ'արհամարհեն իրենց ամուսինները եւ ամբողջ օրը կը զբաղին իրենք իրենց մով, կարծէք թէ ամուսինները գոյութիւն չունին:

6.- Այրերը կ'ատեն անհատականութիւն չունեցող եւ պատասխանատուութիւն չվերցնող կիները, որոնք ամէն բան կը վստահին իրենց ամուսիններուն եւ երբեք չեն նախաձեռններ:

7.- Այրերը կ'ատեն յամուտ կիները, որոնք առհասարակ լրջութեան եւ հասունութեան պակաս կը տառապին:

8.- Այրերը կ'ատեն իրենց ամուսնական կեանքը «ուժեղ» ի վերա-

ծող կիները:

ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԼԻ 5 ԿԵՏՈՒՄՔՆԵՐ

Հոգեբաններու կարծիքով, օրուան ընթացքին վէճի եւ տարակարծութեան առիթները չեն պակասի ամուսնացած զոյգերուն միջեւ: Տեսէք, թէ անոնց կեանքը հեշտ ու տանելի դարձնելու միտումով հոգեբանները ինչ կ'առաջարկեն...

1.- Երբ զոյգեր կը խօսին իրենց ապագայի ծրագրերուն մասին, թող ջանան խօսիլ եւ ծրագրել «մենք»-ով, եւ ո՛չ «ես»-ով:

2.- Օտարներուն ներկայութեան ամուսին մը պէտք է «բարձրացնէ» իր կինը ու դրուատէ անոր առաւելութիւնները եւ փոխադարձաբար:


3.- Խօսակցութեան ընթացքին զոյգերը պէտք է ազատօրէն արտայայտեն իրենց տեսակէտները, եւ նոյնիսկ չհամաձայնելու պարագային, իւրաքանչիւրը պէտք է յստիք ու յարգելիք ցուցնէ իր կողմէ:

4.- Այր թէ կիին տարին քանի մը առիթներով պէտք է վերլին իրենց առաջին հանդիպումը, սէրը, փոխադարձ խոստումներն ու սիրալիր խօսքերը:

5.- Որեւէ ձախողութեան պարագային, զոյգերը յանցաւոր պէտք չէ փնտռեն եւ զիրար պէտք չէ մեղադրեն, այլ պէտք է ջանան ձեռք-ձեռքի ապով յաղթահարել զայն:

ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՔԸ

ԱՄՉԿՈՏ ԵՐԵԽԱՆ



Երբ երեխան քալելու կը սկսի, ի յայտ կու գան անոր առաջին վախերը՝ պարագլուխներն, անծանօթէն, անյայտէն... Կը դառնայ չափազանց զգուշ, եւ նոյնիսկ՝ ոչ ինքնավստահ: Եթէ այս երեւոյթը շարունակուի եւ չեղտուի 2էն 6 տարեկանին ընթացքին, եթէ նկատէք, որ երեխան կը խուսափի իր շրջապատին հետ յարաբերելի, կը մեկուսանայ, կ'ամչնայ, ապա պէտք է օգնէք անոր, որպէսզի յաղթահարէ այս դժուարութիւնները եւ դառնայ աւելի ընկերային եւ ինքնավստահ:

Հոս ծնողները իրենք օրինակ պէտք է ծառայեն իրենց զաւակին, իրենք պէտք է ըլլան նախաձեռնողները:

ՕՐԻՆԱԿ ԾԱՌԱՅԵՑԷՔ

Երբ ձեր զաւակին հետ առնէն դուրս կը գտնուիք «Հատախօսեցէք», նիւթ ստեղծեցէք նպարավածառի: Հետ, դրացուհիին հետ, զպրոցի դրան առջեւ սպասող մայրերուն հետ, ուսուցչուհիին հետ...

ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԼԵՏ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԷՔ

Ձեր զաւակին տարեկից փոքրիկներ կամ դպրոցի դասարաններ հրաւիրեցէք ձեր տունը: Պտոյտներ կազմակերպեցէք անոնց հետ եւ քաջալերեցէք, որ ինքն ալ ընդառաջ իր ընկերներուն հրաւերներուն...

ԲԱՐԵԿԱՄԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԷՔ

Մի վարանիք բարեկամներու հետ արձակուրդներ կազմակերպելու: Թող ըլլան զանազան տարիքի անձեր, թող իւրաքանչիւրը յարգէ, բայց նաեւ յարաբերի եւ գտնէ համապատասխան նիւթեր: Օրինակը դո՛ւք տուէք, որպէսզի ինք ալ սորվի եւ համարձակի:

ՄԻ ԶԱՓԱՋԱՆՑԷՔ

Ձեր երեխան համարձակ եւ ինքնավստահ դարձնելու համար կրնաք զինք արձանագրել թատերախումբի մը, պարախուժի մը, երգչախումբի մը կամ մեր ակումբներու մէջ կիրարկող մարզախաղերու մէջ:

Բայց մի՛ չափազանցեք եւ անոր զբաղումները իր գլուխէն վեր թող չըլլան... Եթէ այս բոլորէն ետք անոր մօտ բարեկալուժ չնկատէք, դիմեցէք հոգեբանի մը:

ԳԵՂԵՑՊԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՔՈՒՐ ԵՒ ԹԱՐՄ ՄՈՐԹԻ ՄԸ ՀԱՄԱՐ...

Արեւը, քրտինքը եւ ապականած օդը կ'աղտոտեն եւ կը յոգնեցնեն մեր մորթը: Ասոնց վրայ կու գայ աւելնալու շպարը, որ նուազ վնասակար չէ, եթէ օրական չմաքրուի:

Ամրան այս տաք օրերուն՝ թարմ եւ մաքուր մորթ ունենալու համար, օրական անցէք այս 3 հանգրուաններէն:



1.- Ամէն առաւօտ հանքային ջուր սրկեցէք ձեր դէմքին վրայ՝ զայն մաքրելու եւ զովացնելու համար. օճառը, եւ յատկապէս՝ վատորակ օճառը կը չորցնէ մորթի:



2.- Թաց կամ խոնավ մորթը սրբելու համար կլոր, սափակ բամպակները քիչ մը խոնացուցէք, որպէսզի աւելի դիւրին սահի ձեր դէմքին վրայ եւ չվիրակորէ ձեր մորթը:




3.- Որեւէ սեր գործածելու պարագային եղէք չափաւոր, իւրաքանչիւր այտի վրայ սիւնոի մեծութեամբ սեր դրէք, եւ ապա՝ մատներուն ծայրով լաւապէս տարածեցէք:

Ամրան ընթացքին թելադրելի է առաւելագոյն չափով խուսափիլ շպարէն եւ դադար տալ մորթին: Սիւս կողմէ, չմոռնալ դէմքն ու վիզը պաշտպանել արեւու ճառագայթներէն, եւ վերջապէս՝ առատ ջուր խմել մորթը յաղեցնելու համար:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ՆՈՒԱԳԻՐ

ՉՈՅԳ ԲԱՆՁԱՐԵՂԵՆՈՎ «ԿՐԱԹԵՆ»



Բաղադրութիւն 6 անձի համար.

- ◆ 5 զգում
- ◆ 6 գետնախնձոր
- ◆ Թարմ ծոթրին
- ◆ 3 պեղ սխտոր
- ◆ 4 ապուրի դգալ ձիթախղ
- ◆ ձերմակ փոշի համեմ
- ◆ Աղ

Պատրաստութիւն.

Դիւղմները լուլալ, ցամբեցնել եւ առանց կեղուելու կլոր, բարակ շերտերու վերածել: Նոյնպէս ալ գետնախնձորը, բայց՝ կեղուելով:

Սխտորի պեղները մանրել, ծոթրինին տերեւները փրցնել եւ մաքրել:

Ներկայանալի ափսէի մը յատակը քիչ մը ձիթախղ քսել եւ վրան շարել գետնախնձորի եւ դրուամի շերտերը մէջընդմէջ: Ամէն անգամ որ յարկ մը շարուի՝ աղել, համեմել, ծոթրինի քանի մը տերեւ ու մանրուած սխտոր պանել եւ անցնիլ երկրորդ յարկին:

Երեսը ծածկել աւելցած ձիթախղով եւ 180 Զերմաստիճանով փուռի մէջ եփել 1 ժամ 35 վայրկեան: Հրամայելու տաք՝ մտղէնի մը կողքին:

ԿԻԼԻԿԻԱ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԵՆ 6 ՆՈՐ ԳԻՐՔԵՐ



Orient plus
HABABE TRAVEL & TOURISM

Varna
\$319

3 days - Direct Charter Flight
Every Tuesday starting from 8 July

Other Destinations
Boat Trip to Cyprus 3 Days \$190
Cyprus & Greece \$425

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

Balkan Holidays
TRANSLITEX TOURS

ԴԵՊՈ ԿԱՌԱ ՇՐՁԱԳՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՍԸ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

2եր փոխները լուլալացէք մեր սեփական օդատարով նուազագոյն սակեր 245\$ էն սկսեալ (ներառեալ շրջապտոյտին հիմնական ծախսերը)

245\$ սկսեալ

Balkan Holidays
VARNA EXPERT NO. 1
Look after No. 1 Let No. 1 Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI
TEL.: 1/304553 - 304563 FAX: 961/310424 BEIRUT - LEBANON

www.aztagdaily.com

ԱՆԱՐԱՏ ԶՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ Ս. ՇՈՒՀԱՆ ՄԱՆԿԱՄԱՌԻ

Հեռ. (01) 449580 ԷՇՐԵՏԻԷ - ԺԵՀԹԱՌԻԻ



Ս. Շուշան մանկամուրը կը սկսի երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 7:30Է մինչեւ 5:00 եւ կ'ընդունի նորեկ մանուկներ հինգ ամիսէն մինչեւ 4 տարեկան:

ՅԱՏՈՒԿ ԴԻՐՈՒԹԻՒՆ ԱՃԽԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ

Մանկամուրը ունի յատուկ անճակագր, կարող հիւանդապահուիլ եւ պատասխանատուութիւնը յանձնուած է Ս. Շուշան մանկամուրի քոյրերուն:

Մանրամասնութեանց համար դիմել Ս. Շուշան մանկամուրի տնօրէնութեան: Երեւան (01) 449580, Էշրեթի: ՏԵՐԵՆՈՒԹԻՒՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՁ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազմ օր մը առաջ, Մինչեւ երեկոյան 5:00:

ՄԱՀԱՋՁԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան աւտել որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՄԱՆՈՒՇԱԿ ՉԸՏԵՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՂԻՍԱԲԵԹ ԶԷՍԵՒԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2003, Նոր Ատանայի Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԵՂԻՍԱԲԵԹ ԶԷՍԵՒԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2003, Նոր Ատանայի Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ-ԹԻԻ 5507 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ ASHIAN TOURS

Այս Կիրակի, 10 Օգոստոսին, միտայ շրջապտոյտ դէպի Դամասկոս, Ստամբուլ-Պոլստան խրախմածք, ճաշ, միայն 25\$, առանց ճաշի՝ 15\$:

17-31 Օգոստոս Երեւան, Ծաղկաձոր, Սեւան. լամ պտոյտներով + վիզա՝ միայն 720\$ փոխան 1100\$:

15-22 Սեպտեմբեր Երեւան, Դարաբաղ, Ծաղկաձոր ամէն օր պտոյտներով, նախաճաշ, ընթրիք, 4 աստղան հիւրանոցներ. գին մէկ շաբաթ փոխան 850\$ միայն 599\$, իսկ երկու շաբաթ փոխան 1350\$ միայն 999\$:

Վառձա VARNԱ ամէն Գործընթացի մէկ շաբաթ պահով նախաճաշով 250\$ վճարման դիւրութիւններ:

Օդանաւի տոմսեր յարմար գիներով:

ԱՃՃԵԱՆ ԹՐԱՎԱԸ հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233978

ԹԻԻ 5506 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	4	Ո	Լ	Տ	Ը	Ն	Լ	Ո	Պ	Պ
2	Ո	Ի	Ր	Ա	Ն	Ա	Լ	Պ	Ա	Ղ
3	Գ	Ր	Ա	Ս	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս
4	Ի	Ք	Ա	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս	Ս
5	Ձ	Բ	Ն	Ա	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս
6	Ձ	Բ	Ն	Ա	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս
7	Ր	Ա	Ս	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս	Ս
8	Ա	Ս	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս	Ս	Ս
9	Ղ	Ա	Ս	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս	Ս
10	Ն	Լ	Ո	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ	Պ
11	Ա	Ք	Ա	Ս	Ձ	Բ	Ն	Կ	Ս	Ս

ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ ASHIAN TOURS

Այս Կիրակի, 10 Օգոստոսին, միտայ շրջապտոյտ դէպի Դամասկոս, Ստամբուլ-Պոլստան խրախմածք, ճաշ, միայն 25\$, առանց ճաշի՝ 15\$:

17-31 Օգոստոս Երեւան, Ծաղկաձոր, Սեւան. լամ պտոյտներով + վիզա՝ միայն 720\$ փոխան 1100\$:

15-22 Սեպտեմբեր Երեւան, Դարաբաղ, Ծաղկաձոր ամէն օր պտոյտներով, նախաճաշ, ընթրիք, 4 աստղան հիւրանոցներ. գին մէկ շաբաթ փոխան 850\$ միայն 599\$, իսկ երկու շաբաթ փոխան 1350\$ միայն 999\$:

Վառձա VARNԱ ամէն Գործընթացի մէկ շաբաթ պահով նախաճաշով 250\$ վճարման դիւրութիւններ:

Օդանաւի տոմսեր յարմար գիներով:

ԱՃՃԵԱՆ ԹՐԱՎԱԸ հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233978

ՍԱԿԱՐԱՆ

Պէրլուրի սակարանին մէջ օտար դրամանշններու փակման սակագիները հետեւեալներն էին երկ.

Սուրիական թղթուկի	29,00 - 29,15 լ.ն.
Իրաքեան տիւար	5032,00 - 4860,00 լ.ն.
Քուէթեան տիւար	5032,00 - 5057,00 լ.ն.
Յորդանանեան տիւար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահիճիսեան տիւար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տիւար	410,75 - 412,75 լ.ն.
Քարաբեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սեւուական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կիւն	242,00 - 252,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2430,00 - 2440,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1117,00 - 1122,00 լ.ն.
Թրքական լիրա	106,75 - 107,25 լ.ն.
Կիպրական փաունտ	2925,00 - 2930,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,45 - 12,55 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	13,25 - 13,30 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1072,00 - 1077,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	974,00 - 979,00 լ.ն.
Եւրօ	1714,00 - 1724,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	136,500 - 141,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	127,500 - 132,500 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	113,000 - 118,000 լ.ն.
Մեքսիքական փէսոս	650,000 - 670,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	16,900,000 - 17,100,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	351,50 - 352,00 \$
Մէկ օնս արծաթ	4,92 - 4,94 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1364 - 1.1371
Քանադական տոլար	1.4052 - 1.4062
Չուիցերիական ֆրանք	1.3488 - 1.3498
Ճափոնական եէն	120.37 - 120.47
Մէկ սթերլին	1.6124 - 1.6134
Մէկ փոլար	560 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒԴԹԵՐ

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում	
Ա. կարգ	4,85 4,80

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱՆԵՍԱՆԵԱՆ Հեռ. 01-252852

ՆՈՐ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ...

Երկար վարագոյրի ու յատկապէս Արեւելեան Գերմանիոյ մէջ պատահած նոր խլրտումներուն արձագանքը կը հասնի արտասահման: 17 Յունիսի առաջին ըմբոստութիւններէն մէկունկէս ամիս ետք պատահած այսօրուան շարժումները ցոյց կու տան, որ համայնապար իշխանութիւնները չեն կրցած կացութիւնը վերահաստատել, հակառակ այն անխնայ միջոցներուն, զորս ի գործ դրին ժողովրդական ինքնաձիգ պողոթնումները գապելու համար: Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, խոտվութիւններ ծագած են Արեւելեան Գերմանիոյ զիւրաւոր քաղաքներուն մէջ, եւ յատկապէս կարգ մը գործարաններու բանուորները գործադուլի դիմած են ըստ երեւոյթի բողոքելու համար դեպի Պերլին ճամբորդութեան վրայ դրուած արգելափակումները:

Որքան է այս պարագան երկաթե վարագոյրի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ՝ աւելի կամ նուազ չափով: Խլրտումներուն արձագանքներ կը հասնին Լեհաստանէն, Չեխոսլովակիայէն, Հունգարիայէն եւ Ալպանիայէն, ուր նոյնպէս տեղի ունեցած են ժողովրդական շարժումներ: Ստալինի մահէն ի վեր իշխանութիւնները կը թուի, թէ հրաժարած են այն խիստ քաղաքականութեանց, զոր կը վարեին արբանեակ երկիրներուն նկատմամբ՝ փութացնելով անոնց խորհրդայնացումը: Հիմա անոնք կը ձգտեն յարմարի տեղական պայմաններուն եւ զանազան դիւրութիւններ կ'ընծայեն տեղացի ժողովուրդին: Բայց այս միջոցները չեն երկիրներուն, որոնք ուր տարիներ ի վեր կ'ապրին Գերմանիոյ ծանր լուծի տակ եւ լաւապէս կը ճանչնան «ազատագրութեան մը բարիքները»:

ՆՈՐ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ...

Երկար վարագոյրի ու յատկապէս Արեւելեան Գերմանիոյ մէջ պատահած նոր խլրտումներուն արձագանքը կը հասնի արտասահման: 17 Յունիսի առաջին ըմբոստութիւններէն մէկունկէս ամիս ետք պատահած այսօրուան շարժումները ցոյց կու տան, որ համայնապար իշխանութիւնները չեն կրցած կացութիւնը վերահաստատել, հակառակ այն անխնայ միջոցներուն, զորս ի գործ դրին ժողովրդական ինքնաձիգ պողոթնումները գապելու համար: Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, խոտվութիւններ ծագած են Արեւելեան Գերմանիոյ զիւրաւոր քաղաքներուն մէջ, եւ յատկապէս կարգ մը գործարաններու բանուորները գործադուլի դիմած են ըստ երեւոյթի բողոքելու համար դեպի Պերլին ճամբորդութեան վրայ դրուած արգելափակումները:

Որքան է այս պարագան երկաթե վարագոյրի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ՝ աւելի կամ նուազ չափով: Խլրտումներուն արձագանքներ կը հասնին Լեհաստանէն, Չեխոսլովակիայէն, Հունգարիայէն եւ Ալպանիայէն, ուր նոյնպէս տեղի ունեցած են ժողովրդական շարժումներ: Ստալինի մահէն ի վեր իշխանութիւնները կը թուի, թէ հրաժարած են այն խիստ քաղաքականութեանց, զոր կը վարեին արբանեակ երկիրներուն նկատմամբ՝ փութացնելով անոնց խորհրդայնացումը: Հիմա անոնք կը ձգտեն յարմարի տեղական պայմաններուն եւ զանազան դիւրութիւններ կ'ընծայեն տեղացի ժողովուրդին: Բայց այս միջոցները չեն երկիրներուն, որոնք ուր տարիներ ի վեր կ'ապրին Գերմանիոյ ծանր լուծի տակ եւ լաւապէս կը ճանչնան «ազատագրութեան մը բարիքները»:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՊԻՉԵԻ «ՔԱՐՄԵՆ»Ի ՆՈՐ ԲԵՄԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ՝ ՊԱՍԼՊԵՔԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Դասական երաժշտութեան եւ մանաւանդ օփերայի արեստի ամէնէն գովերգուած գործերէն մէկն է Պիլի «Քարմէն», որ իրանացի հանդիսատեսներուն պիտի մատուցէ այսօր եւ Շաբաթ, 9 Օգոստոսի երեկոյեան ժամը 8:30ին, Պապայէքի միջազգային փառատօնի ծիրին մէջ:

«Քարմէն»ի ա'յս բեմականացումը, որ «Լիւրիք Տրասիպ» օփերայի կողմէ պատրաստուած է Պապայէքի միջազգային փառատօնին համար, իր առաջին ներկայացումը կ'ունենայ այսօր: Իսկ «Քարմէն» օփերան ընդհանրապէս կը նկատուի տունայ օփերայի խումբին խաղացանքի մասին: Պիլի «Քարմէն» օփերայի խումբին արտադրողն է Պիլի «Քարմէն»-ի ներկայացման ուղղակիորէն կը մասնակցին 145 արուեստագէտներ: Նշենք, որ Տիլիի Հի 2000ի Պապայէքի փառատօնին դերակատարած է Պիլի «Պիլի»-ի յանրուրի սինֆոնիք նուագախումբը: «Քարմէն»ի գործողութիւնը կը պատահի 1820ական թուականներուն Սպանիոյ մէջ: Այստեղ Պիլի «Քարմէն»-ի իր անկաշկանդ բնատրուութեամբ պատճառ կը դառնայ իր երկու սիրահարներուն եւ իր ղեկավարութեան: Չորս արտի բաղկացած այս օփերային մէջ սիրային եռանկիւնի մը պատճառով տառապող Քարմէնի կերպարը ստանձնած է մեզցո տիքրանո Մաւրիսիոյ Քարմէնը, որ առաջին անգամ ըլլալով կը մարմնաւորէ այս դերը: Թեւոր Լուրա Լուսարնո եւ պարիթոն Տրասիպ Տերարի յաջորդաբար ստանձնած են սերերկու սիրահարներուն՝ Տոն Խոսէի եւ Էւքամիլիոյ դերերը:

ԱՅՍՈՐ

- Պապայէքի փառատօն. Պիլի «Քարմէն» օփերայի ներկայացում, ժամը 20:00ին, Ժիլիփիքի տանար:
- Տէլ Էլ Քարմի փառատօն. քաղաքական երկերով «Թուժուր Անսամբլ», ժամը 20:00ին, Սերայ:
- Տոնավանո՝ Ջուր Միքայիլի հին շուկան, մինչեւ 24 Օգոստոս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Փասիոնէ», Իհասն Համոյի գործերը, «Ջաման» ցուցարան, մինչեւ 16 Օգոստոս:
- Պարսիկ ներկայացում՝ «Կրացիա տը Մարիտ», գիշերուան ժամը 10:00ին, «Քաղցին Տիւ Լիպանի» «Սալտե գ' Ամպաստէօր» սրահ, մինչեւ 27 Օգոստոս:
- Ցուցահանդէս Ռաշալայի Քանգակագործութեան Միջազգային Ֆորում, մինչեւ 9 Օգոստոս:
- Հայերէն Այրուբեմի նուիրուած ցուցահանդէս՝ «Ապրող եւ ապրեցող», Մանուկ Հոփայեանի գործերը, «Վարուժան Արք Սեմբըր»ի մէջ, մինչեւ 7 Օգոստոս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Նուփ Քալան», Սինքրիա Քարմի եւ Նայլա Քալանի գործերը, «Ֆրենկ» ցուցարան, մինչեւ 21 Սեպտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս, «Ժամին Ռուպլոյ» ցուցարան, մինչեւ 22 Օգոստոս:
- Արկածայինըրկական խաղերու փառատօն՝ «Էքսպրիմ Էսպրիմ» Փարք՝ Պիլի, մինչեւ Օգոստոսի վերջը:

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ 7 ՕԳՈՍՏՈՍ 1953

ՆՈՐ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ...

Երկար վարագոյրի ու յատկապէս Արեւելեան Գերմանիոյ մէջ պատահած նոր խլրտումներուն արձագանքը կը հասնի արտասահման: 17 Յունիսի առաջին ըմբոստութիւններէն մէկունկէս ամիս ետք պատահած այսօրուան շարժումները ցոյց կու տան, որ համայնապար իշխանութիւնները չեն կրցած կացութիւնը վերահաստատել, հակառակ այն անխնայ միջոցներուն, զորս ի գործ դրին ժողովրդական ինքնաձիգ պողոթնումները գապելու համար: Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, խոտվութիւններ ծագած են Արեւելեան Գերմանիոյ զիւրաւոր քաղաքներուն մէջ, եւ յատկապէս կարգ մը գործարաններու բանուորները գործադուլի դիմած են ըստ երեւոյթի բողոքելու համար դեպի Պերլին ճամբորդութեան վրայ դրուած արգելափակումները:


Որքան է այս պարագան երկաթե վարագոյրի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ՝ աւելի կամ նուազ չափով: Խլրտումներուն արձագանքներ կը հասնին Լեհաստանէն, Չեխոսլովակիայէն, Հունգարիայէն եւ Ալպանիայէն, ուր նոյնպէս տեղի ունեցած են ժողովրդական շարժումներ: Ստալինի մահէն ի վեր իշխանութիւնները կը թուի, թէ հրաժարած են այն խիստ քաղաքականութեանց, զոր կը վարեին արբանեակ երկիրներուն նկատմամբ՝ փութացնելով անոնց խորհրդայնացումը: Հիմա անոնք կը ձգտեն յարմարի տեղական պայմաններուն եւ զանազան դիւրութիւններ կ'ընծայեն տեղացի ժողովուրդին: Բայց այս միջոցները չեն երկիրներուն, որոնք ուր տարիներ ի վեր կ'ապրին Գերմանիոյ ծանր լուծի տակ եւ լաւապէս կը ճանչնան «ազատագրութեան մը բարիքները»:

ԱՅՍՈՐ 7 ՕԳՈՍՏՈՍ

■1935- Սահ Շիրվանզադէի (Ալեքսանդր Սոփիսեան):

ՀԱՍՏԻԿ ԿՐԻՍՏՈՍ

ՔԱԿ ԿՐԻՍՏՈՍ ՎԵՐԱԳԱՌՆԱԼ ԶԻՆԵԱԼ ՊԱՅՔԱՐԻ



Արգելափակում քերտ ըմբոստ ղեկավար Ապտիլ-լա Օճալյան զգուշացուցած է Թուրքիան, թե՛ գինեակ պաշարը կրնայ վերստին բռնկվել անհրաժեշտ մնալ մասնաճյուղի և Երևանի տասնամեակ տեւած տագնապին վերջ տալու համար բանակցությունները գծով իր մերժողական կեցուածքին, հաղորդած է քերտական «Իզմիր-Փոլիթիքա» օրաթերթը երէկ:

Օճալյան ըսած է, թե՛ ՔԱԿ մինչև Ապտեմբեր 1 պիտի սպասէ տեսնելու համար, թե՛ Թուրքիա քերտ ըմբոստներու հետ բանակցելու պատրաստակամութիւն պիտի յայտնէ:

Անոր սպառնալիքը տեղի կ'ունենար մինչ ՔԱԿի 2 անդամներ անձնատուր կ'ըլլային Թրքական իշխանութիւններուն՝ օգտուելու համար ներուժի որոշումէ մը, փոխարէնը իրենց գէշերը վար դնելով:

Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճտէթ Սեզէր երեք-չարթի օր հաւանութիւն տուած է քերտ ըմբոստներու ներուժի օրէնքին:

Այսուհանդերձ, Օճալյան երէկ ըսած է, թե՛ Թուրքիա կր պարտադէր ՔԱԿի, որ պատերազմի դիմէ՝ ներուժէն դուրս ձգելով ՔԱԿի ղեկավարութիւնը:

ՇՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՍԱՍՏԻԿ ՏԱՔԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿԵՆ ԶՈՒՇԵՐ ԽԼԵԼ ԵՐՐՈՊԱՅԻ ՏԱՐԱԾՔԻՆ

Երոպայի լայնածիր գոտիներ խեղդամահ ընող բարձր ջերմաստիճանները երէկ նուազեցան որեւէ նշան չունի, մինչ հրշէջները կը շարունակէին ցամաքամասին հարաւային շրջաններուն մէջ անտառային մահացու հրդեհներուն դէմ պայքարի, իսկ ապակառուցի համեմատութիւնները աճ կ'արձանագրէին:

Երոպայի տարածքին քաղաքներու մէջ ջերմաստիճանները մօտեցած կամ անցած են 40 աստիճան սելսիուսը:

Աելի'ն ֆրանսացի օդերեւութաբան Ժերմ Լըքուի համաձայն, գիշերային զոնայում արեւը կը զգուշացուցէ, որ արեւը կը նշանակէ, թէ իւրաքանչիւր օր նախորդող օրէն աւելի տաք կրնայ ըլլալ:

Հարաւային Երոպայի մեծամասնութեան մէջ չափազանց տաք է ծառայակազմը երաշտը մահացու հրդեհներ պատճառած են Երոպայի, Ֆրանսայի, Իտալիոյ, Սպանիոյ և Փորթուգալի մէջ, աւելի քան 30 րոպէս իր իր մէջ իր հապարտութիւնը մարդիկ խոյ տան իրենց տուններէն:

Չափազանց յոգնած հարիւրաւոր հրշէջներ երէկ վերջոյ յաջողած են հակակշիռի տակ առնել անտառային հրդեհները, որոնք անցնող շաբթուան ընթացքին աւելի քան 50 հազար հեքթար անտառային շրջաններ աւերած են:

Հրշէջները սակայն ծայր աստիճան

իտալիոյ մէջ երէկ տասնեակներով մարդիկ ստիպողաբար հեռացած են իրենց տուններէն և գիւղերէն՝ հիւսիսային Թոսքանի շրջանին մէջ, ուր հրդեհներ ծայր տուած են ծովեզերեայ 2 գոտիներու մէջ:

Գերմանիոյ Պրանտրնպուրկ նահանգը երէկ ահապահ գիւղական յայտարարած է՝ իր անտառներուն մեծամասնութեան պարագային, որոնք կրնան հրդեհներու պոհ երթալ չափազանց բարձր ջերմաստիճաններու և երաշտի պատճառով:

Սպանիոյ մէջ չափազանց բարձր ջերմաստիճաններու հետեւանքով զոհերուն թիւը երէկ առնուազն 13 հարաւորացած է, 2 տարեցներու մահէն ետք:

Երկրի հարաւային կարգ մը քաղաքներու ջերմաստիճանը 45 աստիճան սելսիուսը անցած է: Հոն նաեւ հրշէջներ անտառային հրդեհներու դէմ կը պայքարին:

Բրիտանիոյ մէջ 17 տարեկան 2 պատանիներ չափազանց տաքին առաջին պոհերը դարձած են, անջատ արկածներու մէջ մահանալով, մինչ կը փորձէին լիճի մը և ջրանցքի մը մէջ զոհանալ:

Շուէտի օթոպիւսի մէկ վարորդ որոշած է փէշ հագնի աշխատելու համար՝ կարճ տարած հագնելու իր խնդրանքը մերժուելէ ետք: Հիւսիսային Ռուսիա քաղաքին մէջ, ուր ջերմաստիճանը 25 աստիճան սելսիուսի հասած է, վարորդին ըսուած է, թէ ընկերու-

իտալիոյ մէջ երէկ տասնեակներով մարդիկ ստիպողաբար հեռացած են իրենց տուններէն և գիւղերէն՝ հիւսիսային Թոսքանի շրջանին մէջ, ուր հրդեհներ ծայր տուած են ծովեզերեայ 2 գոտիներու մէջ:

Գերմանիոյ Պրանտրնպուրկ նահանգը երէկ ահապահ գիւղական յայտարարած է՝ իր անտառներուն մեծամասնութեան պարագային, որոնք կրնան հրդեհներու պոհ երթալ չափազանց բարձր ջերմաստիճաններու և երաշտի պատճառով:

Սպանիոյ մէջ չափազանց բարձր ջերմաստիճաններու հետեւանքով զոհերուն թիւը երէկ առնուազն 13 հարաւորացած է, 2 տարեցներու մահէն ետք:

Երկրի հարաւային կարգ մը քաղաքներու ջերմաստիճանը 45 աստիճան սելսիուսը անցած է: Հոն նաեւ հրշէջներ անտառային հրդեհներու դէմ կը պայքարին:

Ֆրիտանիոյ մէջ 17 տարեկան 2 պատանիներ չափազանց տաքին առաջին պոհերը դարձած են, անջատ արկածներու մէջ մահանալով, մինչ կը փորձէին լիճի մը և ջրանցքի մը մէջ զոհանալ:

Շուէտի օթոպիւսի մէկ վարորդ որոշած է փէշ հագնի աշխատելու համար՝ կարճ տարած հագնելու իր խնդրանքը մերժուելէ ետք: Հիւսիսային Ռուսիա քաղաքին մէջ, ուր ջերմաստիճանը 25 աստիճան սելսիուսի հասած է, վարորդին ըսուած է, թէ ընկերու-

սկիւրը, երբ Հուայ գետի ջրերը մակարդակը վտանգաւոր կերպով բարձրացած է: Ներկայիս անոնց աւելի քան 150 հազար մեկուսացած կղզիներու վրայ կ'ապրի, սպասելով, որ ջրերը մակարդակը իջնէ:

(ԱՅՓ)

ԻՐԱՔՅԻՔ ԴՃԳՈՒՎ ԿԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

թէ մը ինկած է:

Ուաշինգթոն յայտնած է, թէ այս տարի Իրաքի մէջ վերակառուցման համար առնուազն 7,3 միլիարտ տոլար պիտի ծախսէ: Մինչ այդ, ՄԱԿի Իրաքի մարդասիրական հարցերը համակարգող պաշտօնատար Ռամիրո Լոփէզ տա Միլվա երէկ յայտնած է, թէ 2003ին վերակառուցման համար կարիքները 20 միլիարտ տոլարով կը գնահատուին:

Ստատամի տապալումէն 4 ամիս ետք, ամերիկեան զինուորականները դաշնակից ուժերը չեն կրցած իրաքցիներու վստահութիւնը շահիլ:

Հարցազնուող իրաքցիներու 32 առ հարիւրը իրան յաւանորդութիւն արտայայտած է այդ ուժերուն «Իրաքի համար աւելի քան ապագայի կերտումին կարողութեան մասին»:

ԻՃՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ 25 ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ

Իրաքի իշխող խորհուրդը որոշած է ընդհանուր 25 նախարարութիւններ ստեղծել, այսինքն նախկին վարչակարգէն 6 նախարարութիւն աւելի, յայտնած է Քիւրտիստանի Ժողովրդավարական կուսակցութեան մէկ քանակը երէկ:

Քննարկումները սկսած են Երեքշաբթի օր եւ շարունակուած երէկ:

Բարեբեր ըսած է նաեւ, որ նախարարներու նշանակումը ժամանակի կը կարօտի, որովհետեւ անհրաժեշտ է «ատակ անձեր» ընտրել:

Միւս կողմէ, Մ. Նահանգներ Երեքշաբթի օր կող ուղղած են Արաբական Լիգային, որ գորավիզ կանգնի իշխող խորհուրդին, հակառակ 22 անդամ հաշուող խմբակցութեան մերժողական կեցուածքին՝ այդ մարմինը ճանչնալու գծով:

Մինչ այդ, յորդանանեան մամլոյ աղբիւրներ երէկ հաղորդած են, որ Յորդանանի արտաքին գործոց նախարարը զգուշաւոր կերպով զօրակցութիւն արտայայտած է Իրաքի իշխող խորհուրդին:

(ԱՅՓ)

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Է ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ

Ձեր դիմաց կը բանայ այս մասնագիտութիւնը՝ Ա. Եթէ հասած էք Թ. դասարան՝ արձանագրուէ Պաքալորիա Ա. դասարան, Բ. Եթէ տիրացած ես Պաքալորիայի, արձանագրուէ Գոլէճին համալսարանի (T.S.) Ա. տարւան:

Մեր շրջանաւարտները փնտռուած են և կը գործեն Լիբանանի յառաջադէմ վարժարաններու մէջ:

Արձանագրութիւն՝ ամէն օր:

ԾԱՆՕԹ. Եւրոպական պատճառով ոչ մէկ հայ ուսուցիչ պիտի զրկուի իր մասնագիտացումի կարելիութենէն:

Հայ վարժարաններ, դո՛ւր եւս օգտուեցէք ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ մեր շրջանաւարտներէն:

ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ. Տրոպ' հեռ. 01/251320

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՅԱՐԱՐՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԸՆԴ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԵՉԵՐ ՎԱԲԵՐԱՑՈՒՑ ԲԱՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԿՐԾԱՏՈՂ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

Թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեճտէթ Սեզէրի գրասենեակը երէկ յայտարարեց, որ Սեզէր վաւերացուցած է բարեփոխումներու թղթածրարը, որ կ'ընդգրկէ քաղաքականութեան մէջ գիտնորակներու ազդեցութիւնը սահմանափակող օրէնքներ: Նշալ բարեփոխումները անցեալ շաբաթ որդեգրուած էին Թուրքիոյ խորհրդարանին կողմէ: Այս քայլը արժանացած էր Երոպական Միութեան գնահատանքին:

Հակառակ անոր, որ բանակի պատասխանատուները ցարգ հրապարակաւ չեն անդրադարձած այս զարգացումներուն, այսուհանդերձ բարձրաստիճան գիտնորակներ իսլամական արժաններ ունեցող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան կառավարութիւնը կ'ամբաստանեն ընելով, որ ան Երոպական Միութեան պահանջները կ'օգտագործէ բանակին դերը հարցականի տակ առնելու համար:

«ՄԱՐԻՈԹ» ՊԱՆԴՈՎԻՆ ՌՄԲԱԿԱՐՄԱՆ ԾԱԼՔԵՐԸ ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԻՆ

Ինտոնեզիոյ մայրաքաղաք Ճաքարթայի մէկ պանդոկը հարուածած ուժերը ընդհանրապէս հեռաձայնով մը պայթեցուցած է, յայտնած է երկի ինտոնեզիոյ ոստիկանապետ Լուրին Մափասէնկ, աւելցնելով, որ յարձակումին ձեւը նման է Պայիի եւ Ֆիլիպիններու դեպքին տան ուժահարուածներուն:

Անցեալ 2 յոկտեմբերին Պայի կղզին վրայ տեղի ունեցած յարձակումին հետ զուգահեռները ամբաստանած են այն կասկածները, թէ Երեքշաբթի օրուան «Մարիոթ» պանդոկին ուժահարուածը, որ 14 զոհ եւ 150 վիրաւոր խլած է, ձեւաւ իսլամիա ցանցին կնիքը կը կրէ: Անկապ ամբաստանուած էր Պայիի պայթումներուն ձեռնարկած ըլլալու յանցանքով:

Աշխարհի տարածքին կառավարութիւնները դատարարած են ուժահարուածը, մինչ Աստորալիա զգուշացուցած է, թէ ինտոնեզիոյ մէջ մօտալուտ այլ յարձակումներ հաւանական են:

Մ. Նահանգներ, Ֆրանսա, Չինաստան, Ֆիլիպիններ, Սինկափուր, Քաթար, Իրան, Գառապարտած են ահաբեկչական մահացու գործողութիւնը: Այս վերջինը շեշտած է «միջազգային ահաբեկչութեան դէմ առանց գաղտնիութիւն կատարելու պայքարին անհրաժեշտութիւնը»:

«ՄԱՐԿՈ ՊԱՊԻԿԵԱՆ» ԴԱՇՆԱԿԻ ՄՐՑԱՆԸ 2003 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մարկո Պապիկեան» Երաժշտական Հիմնարկը Լիբանանի Բարձրագոյն Երաժշտանոցի եւ Համալսարանի Բարսեղ Կանաչեան Երաժշտական քոլեճի հետ համագործակցաբար կը կազմակերպէ իր Տրոպ մրցանքը: Այս տարի մրցանքը յատկացուած է դաշնակի: Ան օժտուած է երեք մրցանակներով: Առաջին մրցանակ՝ 2500\$ են մէկ մենահամերգ կազմակերպութեամբ Լիբանանի Ազգային բարձրագոյն երաժշտանոցի: Երկրորդ մրցանակ՝ 1500 \$ Երրորդ մրցանակ՝ 1000 \$

Մրցանքին կրնան մասնակցիլ այն թեկնածուները, որոնք ունին լիբանանեան, սուրիական, յորդանանեան, եգիպտական եւ կիպրական հպատակութիւն: Մասնակցողներուն տարիքը պէտք չէ անցնի 25ը: «Մարկո Պապիկեան» նախորդ մրցանքներու մրցանակակիրները չունին մասնակցելու իրաւունք:

Թեկնածուները պարտին իրենց հետ բերել. Անձնաթուղթի լուսապատճէն. Թեկնածուին կողմէ ստորագրուած հաստատագիր մը, ուր ան կ'ընդունի մրցանքի պայմանները եւ կ'ենթարկուի անոնց առանց որեւէ վերապահութեան: Ուսումնական մակարդակի հաստատագիր մը, իրենց յաճախած հաստատութեան կամ մասնակի ուսուցիչէն: Ունկնդրութիւնները պէտք է ընթանան երեք հանգրուանով՝ բաց ըլլալով հանդիսատեսին համար. Դեկտ. 15ն մինչեւ 6, Լիբանանի Ազգային Բարձրագոյն Երաժշտանոցին մէջ, Չոքաք էլ Պլաթ: Երեք մրցանակակիրները կը մասնակցին հանրութեան համար տրուելիք համերգին՝ Սէն ժոպէֆ Համալսարանի հասարակական գիտութիւններու Փիեռ Ապու հարթըր Ամփիթատրոնին մէջ, Գամակոս փողոց, Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003ի երեկոյեան ժամը 8:30ին:

Մրցանքի կանոնակարգը այստարաւ Երաժշտանոցի, ինչպէս նաեւ Համալսարանի Բ. Կանաչեան Երաժշտական քոլեճի մէջ (Համալսարանի «Լեռն Շանթ» Մշակութային կեդրոն, Պ. Համուտ, Սէն ժոպէֆ եկեղեցիի մօտ): Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Բարսեղ Կանաչեան Երաժշտական քոլեճին մէջ, ուրկէ թեկնածուները կրնան ստանալ մրցանքի պարտադիր ստեղծագործութիւնները: Արձանագրութեան վերջին ժամկէտ՝ 10 Հոկտեմբեր 2003: Արձանագրութեան սակ՝ 30.000 լ.:

Բարսեղ Կանաչեան Երաժշտական քոլեճի քարտուղարութեան գրասենեակը բաց է ամէն օր՝ բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն. կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00: Հեռաձայն՝ 01-265899 01-249375 Ե - նամակ՝ parsegh@cyberia.net.lb hamajal@lynx.net.lb